որ Գերմանիայում երեւելի կախարդ էր, եւ գիտէր, ըստ աւանդութեան, բնութեան բոլոր գաղտնիքները եւ յարաբերութիւններ ունէր ոգիների հետ. ուստի եւ ապա գրութեան ծագումն ժողովուրդն երկար ժամանակ վերաբերում էր կախարդութեանը Վերջապէս Գուտտէնբէրգը ընկերութիւն կազմեց Հէյլմանի հետ, որը Ստրասբուրգում առաջին թղթի գործարան հիմնողի եղբայրն էր:

(Կշարունակի):

Մ. Տ. Ա.

ԻՄ ՓԱՓԱԳ.

Մտածող Հայեր, բանական Հայեր,
Պիտի դադարէ՞ք լինել անտարբեր.
Պիտի ցանկա՞ք դուք ազգային պարծանք,
Թէ ձեր կեանք անէ՞ք մաշող բամբասանք,
Շուրջ լուսացած է, դուք ի՞նչի կ՚քնէք.
Անհոգ և անմիտ մնալ ունի՞ արժէք,
Հայեր, միտք արէք, ի՞նչ է ձեր արած.
Ո՞ւր է ջերմ սրտով ձեր պաշտած Աստուած,
Ո՞ւր ձեր անկեղծ սէր առ Իշման սուրբ տեղ,
Որ հայ ազգութեան է խարիսխ զօրեղ,
Իսկ ճշմարտութիւն, հայասիրութիւն
Ե՞րբ պիտի առնեն ձեր մէջ յարութիւն,
Ազգին ծառայել ե՞րբ կ՚համարիք
Ուրաքանչիւրդ ձեր քաղցր պարտիք,
Խեղճ եղբօրդ կ՚լինի՞ք առատնուիրող
Թէ պիտի պաշտէ՞ք անդադար ձեր փող,
Թշուառ մի՛ կացէ՛ք, իմ սիրուն Հայեր,
Խելք, ոգի առէք, գործեցէք գործեր:

ԻՇԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ:

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

«Արարատի» վերջին տետրակում խոստացածիս համաձայն, Վեհափառ Հայրապետի հրամանով, կհրատարակվի Խորէն Վարդապետ Ստեփանէի յայտարարութիւնը, որ այս է ահա.

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ
ԾԱՑՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ, ՍՐԲԱԶՆԱԿԱՏԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ Դ.ի:

Ամենախոնարհ յայտարարութիւն:

Վեհափառ սուրբ Հայրապետ,

Վեհափառութիւն Ձեր բարեհաճեցայք հրամայել, զի ես յաւուրս ամարային արձակուրդի Գէորգեան ճեմարանի ճանապարհորդեցից ի Ռու-